

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հ. Ս. Խ. Հ.

Պրովեսարներ բոլոր յեկեղեցի, միացել

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

Ն. Ի. ԲԵԽՈՎՍԿԻՅ

ԻՆՉ Ե ՏԱԼԻՍ ԲԱՆՎՈՐԻՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ



368.4

ՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՍՇԻԺՈՂԿՈՄՍՏԻ ՍՈՑԻԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ.

F-60

ՅԵՐԵՎԱՆ—1924.

Հ. Ս. Խ. Հ.

Պոլեարներ բոլոր յերկրների, միացե՛ք


ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

368.4
P-60
W

Ն. Ի. ԲԸԽՈՎՍԿԻՅ

ԻՆՉ Ե՛ ՏՍԼԻՍ ԲԱՆՎՈՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՍՇԽԱՏՈՂԿՈՄԵՍՏԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ.
ՅԵՐԵՎԱՆ—1924.

~~8040-53~~



Տիրամ 500

Պետերատի առաջին տպարանի Հանրաքաղաքում.

ԻՆՉ Ե ՏԱԼԻՍ ԲԱՆՎՈՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՈՎ ԻՆՉՊԵՍ Ե ԱՊՐՈՒՄ

Բավական է, վոր քիչ ուշադրութեամբ դիտենք մարդկանց կյանքը, վորպեսզի իսկույն նկատենք, թե ինչպես մարդիկ առերևույթս նման են իրար, բայց ապրում են տարբեր ձևով:

Գործարանատեր Բաղամյանի գլխավոր գործը իր գործարանը, իր կապիտալն է: Գործարանին ու կապիտալին նա յերկրպագում է, հոգ է տանում նրանց մասին, իր ամբողջ ժամանակն ու մտքերը նրան է նվիրում: Յե՛վ իզուր չի անում նա այդ: Գործարանն ու կապիտալը հնարավորութուն են տալիս նրան իր քեֆին ապրել, հոգ չտանել վաղվա որվա մասին, համեղ ուտել, փափուկ պառկել: Իսկ հենց վոր խլեցիր նրա գործարանը, նա այլևս կապիտալիստ չէ, այլ սոսկ «Բաղամյան», վորոնց թիվը հարյուրավոր ու հազարավոր է: Նա այլևս բանվորներ չունի, վոր աշխատեն, չարչարվեն ու բարիքներ ստեղծեն նրա համար, չունի ծառաներ, վոր համեղ կերակուրներ մատուցանեն նրան: Բաղամյանն այլևս նժույգներ չի նստում, այլ վոտքով է շրջում, մի խոսքով նրա կյանքը բոլորովին փոխվել է: Իսկ ինչից է այդ բոլորը: Նրանից, վոր նա զրկվել է գործարանից ու կապիտալից, վոր նա այլևս կապիտալիստ չէ:

Հողատեր Ամիրյանի գլխավոր գործը հողն ու տնտեսութունն են: Հողը տալիս է նրան ամեն ինչ՝ և՛ հաց, և՛ հագուստ, և՛ վոտնաման: Զրկիր Ամիրյանին հողից ու տնտեսութունից, և նա բոլորովին ուրիշ մարդ կդառնա:

Հաստափոր ու հպարտ Ամիրջանը կդառնա սովորական, աննկատելի մի գյուղացի, կնմանի կիսաքաղց ու կիսամերկ մուրացկանի:

Բանվոր մարդը միայն մի կապիտալ ունի: Դա նրա աշխատավարձն է: Յեթե բանվորն աշխատանք ունի, նրա տանը ամեն ինչ տեղին է ու լավ. և ինքն է կուշտ ու հագնված, և ընտանիքն է կուշտ, և անկյուն ունի ապրելու համար: Իհարկե, նա ճոխ չի ապրում, յերբեմն ել նեղ դրության մեջ է լինում, բայց ելի լավ է, յեթե գործի յե, մի կերպ գլուխ է պահում, բայց բավական է, վոր նա զրկվի աշխատավարձից, նրա ամբողջ կյանքը միանգամից փոխվում է: Նա այլևս կուշտ չի, հագուստ ու մյուս իրերը, վոր կարելի յե գրավ դնել կամ ծախել, արդեն վաճառքի յեն հանված ու սպառված են: Բնակարանը դատարկ է, փայտ չկա, և գնելու հնարավորութունն էլ չկա: Ընտանիքը դատապարտված է կիսաքաղց գոյության: Պարտքեր են առաջ գալիս, և նրա ընտանիքում սկսվում է յերկպառակութունը: Կինը, վոր մինչ այդ հաշտ եր ապրում, քաղցածութունից այժմ դառնում է մոթմոթան ու չար, յերբխաները շրջում են կիսամերկ ու կեղտոտ: Մի խոսքով՝ ամեն ինչ նրա կյանքում տակն ու վրա յե լինում:

Իսկ բանվորին աշխատավարձից զրկելը շատ հեշտ է: Դրա պատճառները շատ են:

ԻՆՁ ՊԱՏՃԱՌՆԵՐՈՎ Ե ԲԱՆՎՈՐԸ ԶՐԿՎՈՒՄ ԻՐ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻՑ

Շատ ծանր է դառնում բանվորի դրությունը, յերբ նա այս կամ այն պատճառով զրկվում է իր աշխատավարձից: Իսկ այդ պատճառները շատ են: Տեսնենք այժմ, թե վորոնք են այդ պատճառները: Դիմենք զրանցից ամենազլխավորին:

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

Գործարանում, դազգյահի մոտ աշխատում է վոմն Գրիգորյան և հանկարծ մրսելուց կամ այլ պատճառով հիվանդանում է: Ո՞վ կհասկանա գաղտնիքը. հիվանդությունը մութ բան է:

Լարում է իր ուժերը Գրիգորյանը, չի հեռանում դազգյահից, մտածելով, վոր կառողջանա: Բայց ահա անցնում է մեկ, յերկու օր, իսկ հիվանդությունը վոչ միայն չի անցնում, այլ ավելի ևս ուժեղանում, սաստկանում է, մանավանդ իրիկնապահին. գլուխը կարծես արձիճ են լցնում, ամբողջ մարմինը կոտրատվում է, դժվարությամբ է շնչում. այ քեզ փորձանք...

Յեվ ահա, ինչպես ասում են, մի գեղեցիկ առավոտ սուշում, ճչում է գործարանի սուլիչը, աշխատանքի յե կանչում Գրիգորյանին, իսկ նա՝ Գրիգորյանը, պառկած, ջերմում ու զառանցում է: Պարզվում է, վոր հիվանդությունը թեթև չէ, այլ թոքերի բորբոքում է:

Հիվանդությունը յերկարում է, և Գրիգորյանի գործերը բոլորովին վատանում են: Փող չկա, ստանալիք էլ չունի, բնակարանավարձը չի վճարված, կինը վոչինչ չունի շուկա դուրս գալու համար, պարտքի տակ է ընկնում, կարիքը մեծանում: Աղքատությունը համառորեն ծեծում է նրա դուռը: Ո՞վ չի յեղել այդպիսի դրության մեջ:

— Սպասիր, յեղբայր, ասաց նա, պատասխանելով իմ հարցերին. — Ի՞նչ ես ուզում ասել — մթթե միայն բանվորներն են հիվանդանում:

Մթթե միայն մենք ենք մրսում, հիվանդանում և արդյոք կապիտալիստները ազատ են դրանից:

— Դե, իհարկե հիվանդանում են նաև հարուստները, սակայն գործարանատիրոջ հիվանդութիւնը բոլորովին չի անդրադառնում նրա դրութեան վրա՝ նրա հիվանդութեան ժամանակ գործարանը աշխատում է, նրան ոգուտ տալիս, նրա ընտանիքը առաջվա պես ուտում, խմում, հագնվում է և, ինչպես առաջ, վոչ մի բանի կարիք չի զգում:

Հարուստին չարիք հիվանդութիւնը այցելում է մենակ, իսկ մեղապետներին մոտ նա գալիս է հոգսի, աղքատութեան, քաղցի և ցրտի հետ միասին... Այդ մեկ:

Բացի դրանից, բանն այն է, վոր հիվանդութիւնը «սիրում» է մեր բանվոր յեղբորը: Հայտնի յե, վոր բանվորները ավելի հաճախ են հիվանդանում, քան հարուստները: Վերցնենք որինակ, թոքախտ հիվանդութիւնը կամ, ինչպես նրան ասում են նաև—տուբերկուլյոզը: Ո՞վ է դրանով ավելի շատ հիվանդանում:—Բանվորները և մանավանդ նրանք, ովքեր հարկադրված են աշխատել փոշու մեջ: Փոշին անցնում է նրանց թոքերը:

Ի՞նչպես պետք է պահպանի իրեն հողացավից (ընկած ատիղմից) հանքագործ բանվորը, յերբ նա իր ամբողջ կյանքը անց է կացնում խոնավ հանքերում: Ի՞նչպես պետք է պահպանվին թոքային հիվանդութիւններին տպագրական կամ ծխախոտի գործարանի բանվորները, վորոնք ամբողջ որը թունավորված ող են շնչում:

Այն բոլորը, ինչ վոր շրջապատում է բանվորին, նրա կյանքի պայմանները, այսինքն և՛ աշխատանքը, և բնակարանը, և՛ ուտելիքը, և՛ հագուստը—այս բոլորը հիվանդութիւնների զարգացման համար ամենալավ հողն են ներկայացնում. հիվանդութիւնը բանվորի կյանքի մշտական ուղեկիցն է, նրան ամենից հաճախ այցելող հյուրը:

ՀԱՇՄՈՒԹՅՈՒՆ

Դազգայնի մոտ աշխատում է վոնն Պետրոսյան: Տասնյակ անիվներ պտտվում են նրա շուրջը, թոկերը անծայր ժապավենի պես ձգվում են նրա զլխավերևը, սըռնիավոր գունդերը պտտվում են, ամեն ինչ չխչխկում, ճռճռում է, խլացնում և անվերջ սպառնում՝ «Զգուշացիր, հէյ, զգուշացիր»: Սակայն մարդկային ուշադրութիւնը իր սահմանն ունի և վերջապես նա հոգնում է, մանավանդ ծանր և լարված աշխատանքի ժամանակ:

Յեվահամեր Պետրոսյանը հանկարծ անզգուշ շարժվեց. խշշաց ինչ վոր բան, ճռռաց ու Պետրոսյանի շորերից բռնած՝ քաշեց նրան, տարավ, բարձրացրեց և ուժգին խփեց գետին այնպես, վոր նրա աչքերի առաջ սևացավ, և Պետրոսյանն ուշաթափվեց:

Սթափվեց ցավից ու տեսավ, վոր իր շուրջը շփոթեր տիրում, ու լսվում է—«Պատգարակ բերեք, պատգարակ (НОСИЛКИ)»: Յեվ միքանի ըոպեյից հետո գունատ և արյունաշագախ՝ Պետրոսյանին պատգարակով տանում են հիվանդանոց, պատասխանելով անցորդների սրտահույզ հարցին՝—«Դժբախտութիւն է պատահել, բանվորը շարժվել է»:

Իսկ Պետրոսյանի տանը նույնն է, ինչ վոր Գրիգորյանի տանն էր՝ հոգս ու կարիք... ամեն ինչ նույնն է, մի տարբերութեամբ միայն. հիվանդ Գրիգորյանը զեռ հույս ունեւր առողջանալու, իսկ հաշմացած Պետրոսյանն այդ հույսն էլ չունի. էլ ո՞վ նրան, անվոտին ու կռնատին գործ կտա:

Բայց գիտե՞ք, ընկերներ, թե աշխարհում տարեկան քանի այդպիսի պետրոսյաններ հաշմանդամ են դառնում: Արխանգելսկի, Կիևի, Ուկեսսայի, Լենինգրադի, Մերձբալթյան և այլ շրջանների գործարաններում 1912 թվին 803 հազար բանվորութիւն կար, և այդ ձեռնարկութիւններում նույն տարվա ընթացքում 53 հազար

դժբախտ դեպքեր են յեղել, այսինքն յուրաքանչյուր 1000 բանվորից 66 հոգուն մեքենաները այլանդակել, հաշմանդամ են դարձրել:

1915 թ. ին Արլոսի շրջանի գործարաններում աշխատել են 111.500 բանվոր, նրանցից 7.900-ը, այն է 1000 բանվորից 71-ը հաշմանդամ են դարձել:

Յեվ այսպես շարգվում և այլանդակվում են տասնյակ հազարավոր մարդիկ վոչ միայն Ռուսաստանում, յերբ ցարական ինքնակալության որոք գործարանները շատ վատ եյին կազմակերպված (գործարանատերը կազմակերպում եր այն, իր ցանկության համեմատ, միայն թե եժան լինի), այլ նաև արտասահմանում, վորտեղ գործարանատերերին ստիպում եյին զանազան նախազգուշական միջոցներ ձեռք առնել: Անգլիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Բելգիայում և Զվիցերիայում տարեկան մեկ և կես միլյոնից ավելի մարդիկ հաշմանդամ են դառնում, վորոնցից առնվազն 16 հազար հոգի մեռնում են: Միայն Պրուսիայում 36 տարվա ընթացքում (1886—1911) գործարաններում հաշմանդամ են դարձել մոտավորապես 11 միլյոն բանվոր, այսինքն, աշխարհ են դուրս բերել անվոտ, անկուռ, կույր ու խուլ մարդկանց մի հսկայական բանակ:

Կա և մեկ ուրիշ հաճախակի հյուր բանվորի համար:

ԱՆԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Վոմն Պատրիկյան աշխատում ե գործարանում և հանկարծ անսպասելիորեն նրան զրասենյակ են կանչում:

- Կանչել եք ինձ, Պատրիկյանիս:
- Կանչել ենք — ստացիր հաշիվդ ու գնա:
- Ինչո՞ւ:
- Այնպես — գործ չկա:

Առողջ ե նա բոլորովին, հաշմանդամ չե, ուզում ե աշխատել, ընդունակ ե, բայց չի կարող, վորովհետև գործ չեն տալիս:

Նա չի հուսահատվում և սսում ե. — աշխարհը հո չի քանդվել — ձին լինի, թամբն ել կճարվի: Բայց այդպես չե: Գնում ե մի գործարան — չեն վերցնում: Գնում ե մյուսը, սսում են՝ գործ չկա: Բորսա յես գնում, այնտեղ ել հազարավոր քեզ նման անգործներ հերթի յեն սպասում, իրենց բանվորական ուժը ծախելու համար, սակայն գնող չկա...

Իսկ տանը — տանը միևնույն հին, ծանոթ պատկերն ե — կինը տխուր ե ամպի նման, յերեխաները քաղցած են, վառարանը վառած չե, փող չկա: Յեվ միշտ մի բանի մասին ե մտածում՝ վորտեղ գործ գտնել, ինչպես փող ձարել, ինչ անել...

Վերցնենք, որինակի համար, բանվորի մեկ ուրիշ հյուրին, վորը հարուստներին ուրախություն ե բերում, իսկ աղքատներին և՛ վիշտ, և՛ ուրախություն. —

ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Վաղուց ե, և անվերադարձ անցել են այն ժամանակները, յերբ գործարանում միայն տղամարդիկ եյին աշխատում: Այժմ որ ավուր կանանց թիվը գործարաններում և արհեստանոցներում շատանում ե ու շատանում: Որինակ՝ Ամերիկայում 1915 թ. պատերազմի ժամանակ գործարաններում պաշտպանության գործի համար աշխատում եյին մոտավորապես 140 հազար կանայք, իսկ 1917 թ. միևնույն գործարաններում նրանց թիվը հասել եր 700 հազարի, այսինքն հինգ անգամ ավելի:

Գերմանիայում 1917 թ. հիվանդանոցային գանձարկղի կին անդամների թիվը ավելի յեր տղամարդկանցից (այնտեղ հիվանդանոցային գանձարկղին կարող եյին մասնակցել միայն բանվորներն ու ծառայողները): Ռուսաստանում, գործարաններում աշխատող բանվորուհիների թիվը տարեցտարի նույնպես ավելանում ե:

այսպես—1913 թ. տղամարդ բանվորների թիվը հասնում էր մեկ միլիոն 363 հազարի (69⁰/₀), իսկ կանանց թիվը՝ 603 հազարի (31⁰/₀): 1917 թ. Ռուսաստանում (առանց Լեհաստանի և Լատվիայի) գործարաններում աշխատում էին մեկ միլիոն 255 հազար տղամարդ (60⁰/₀) և 840 հազար (40⁰/₀) կին:

Յեվ ահա այդ հարյուր. հազարավոր բանվորուհիներին վրձնում Մարիամ զգում է, վոր շուտով մայր է դառնալու: Թվում է, թե այստեղ տխրելու վտանգ չկա: Ընդհակառակը, պիտի ուրախանա. ահա զավակ է ծնվում, վոր մխիթարություն է բերելու ծնողներին նրանց յերիտասարդության որոք և ոգնելու յենրանց ծերության որերին:

Իսկ Մարիամին չի ուրախացնում այդ միտքը: Հղիությունը և ծննդաբերությունը յերկար ժամանակով զրկելու յեն նրան աշխատանքից և, հետևաբար, աշխատավարձից:

Բժիշկներն ասում են, վոր հղի կանանց համար անհրաժեշտ է մաքուր և թարմ ոդ, իսկ Մարիամը շնչում է ամեն որ գործարանի անխաթուր յովարակված ոդը: Բժիշկները խիստ արգելում են հղիներին ծանր աշխատանք կատարելը, ընդհակառակը, խորհուրդ են տալիս թեթև աշխատանք կատարել, շատ չհոգնել: Իսկ մեր Մարիամը գործարանում ծանր բեռ է կրում իր ուսերի վրա, և յերեկոյան տուն դառնալիս հոգնածությունից վոտքերը ծալվում են: Նա այժմս պետք է լավ սնվի, վորպեսզի կարողանա իր յերեխային ել կերակրել, իսկ նա չոր ու ցամաք է ապրում: Անհրաժեշտ է, վոր նա ժամանակավորապես թողնի գործարանը—չ⁶ է վոր որեոր աշխատանքը նրա համար ավելի դժվարանում է. բայց ի՞նչպես թողնի աշխատանքը: Չ⁶ վոր մի կերպ ապրել է հարկավոր: Ո՞վ նրան կկերակրի: Թոչունները նրան հո չ⁶ են կերակրի, — «Ինչ կաշխատես, են ել կուտես» — ասում է առածը: Յեվ աշխատում է Մարիամը, իր վերջին ուժերը լարած, մինչև վերջին որը և քիչ է մնում, վոր դադարաչի վրա ծնունդ նստի:

Ահա և յերկար սպասած ժամանակը հասավ, և Մարիամը կամա-ակամա թողնում է աշխատանքը: Առաջ են գալիս նոր ծախքեր, նոր հոգսեր, վորոնք նրան հնարավորություն չեն տալիս մեկ որ ավելի հանգստանալու և դեռ չկազդուրված, այդ կնոջը մղում են դեպի գործարան, դեպի դադար: Նույն կարիքը պոկում է զավակին Մարիամի կրծքից. յերեխային կերակրելու մասին նա մտածել չի կարող, ժամանակ չկա: Յեթե միքանի ըրպե բացակայե գործարանից—իսկույն կվճռեն և հացից կզրկեն: Իսկ տանը պառավ տատը կամ հարևանուհին ուտացնում են ամեն ինչ, անխաիր, ինչ ձեռքներն է ընկնում, ու բերանն են դնում կեղտոտ ծծակը, (СОСКА) վորպեզի չճշա:

Յեվ այդ բոլորի հետևանքը լինում է այն, վոր բանվորների ընտանիքներում յերեխաները կոտորվում, մեռնում են ճանճերի պես. բանվորների յուրաքանչյուր հարյուր յերեխայից հազիվ կենդանի յե մնում կեսը:

Գերմանիայի Բրեմեն քաղաքում հաշված է, վոր հարուստների մի տարեկան յերեխաների յուրաքանչյուր հազարից բնածին թնւության պատճառով մեռնում են 19-ը, իսկ աղքատների յերեխաներից՝ 49 հոգի:

Վատ կարհեստական սննդի հետևանքով առաջացող հյուժախտից և այլ ստամոքսային հիվանդություններից նույն Բրեմենում հարուստների մի տարեկան յերեխաների յուրաքանչյուր 1000-ից մեռել են 6 հոգի, իսկ չքավորներից՝ 92 հոգի: Թոքախտից հարուստների յուրաքանչյուր 1000 յերեխաներից մեռել են 2 հոգի, իսկ չունևորներից՝ 12 հոգի: Յեվ այդ զարմանալի յել չե. միթե կարող է ապրել այն յերեխան, վորին ծննդյան հենց առաջին որից իսկ, կարծես թե դիտմամբ այդպես են պահում, վոր նա մեռնի:

Յերեխային մայրական կաթ է հարկավոր, նրան կերակրում են ուրիշ կաթով, կամ ծամած հացով և այլն: Նրան հարկավոր է մայրական քնքուշ խնամք, իսկ հիվանդ յերեխան ժամերով մնում է պառկած, կեղտոտ, ան-

խընամ, անլույս ու վարակված ողում: Ավիլի զարմա-
նալի յե այն, թե ինչպես այդ պայմաններում գտնվող
յերեխաներից վոմանք մեծանում և ապրում են մինչև
ծերություն:

Աշխատավարձից զրկվելու ահա մեկ ուրիշ պատճառ:

ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԾԵՐՈՒԹՅՈՒՆ

Մարդն ապրում էր և գործում, աշխատեց իր ամ-
բողջ կյանքը և մաշվեց: Բայց ահա նա ծերացավ, կամ
մի անբուժելի հիվանդություն ստացավ:

Քանի դեռ ջանքեր եր, առողջ և ուժեղ—գործարա-
նում նրան աշխատանք տալիս էին և նույնիսկ գնահա-
տում էին: Իսկ յերբ ծերացավ, ուժասպառ յեղավ, ա-
սացին—«Դեհ, այլևս մեզ պետք չես, գնա»: Չէ՞ վոր
բանվորը նույնը չե, ինչ թանգարժեք մեքենան. վերջի-
նիս մասին տերը հոգ ե տանում, նորոգում, ստիպում
ե մաքրել, կարգի բերել այն: Տիրոջ համար մեքենան
փող արժե: Իսկ մարդու, կենդանի մեքենայի մասին
արժե, արդյոք, հոգ տանել: Կգրի աշխատանքի բոր-
սային, և նրան ուժեղ և առողջ թեկուզ հազար նոր բան-
վոր կուղարկեն: Իսկ այն հյուժված, մաշված, բոլորո-
վին անպետքացած ծերունին կամ հաշմանդամը պիտի իր
տունը գնա, ուր նրան սպասում են անհույս ու անսահ-
ման կարիքը, քաղցն ու աղքատությունը:

Լավ որերի և վո՛չ մի հույս:

ԱՅՐԻՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՎՈՐԲՈՒԹՅՈՒՆ

Առաջին հայացքից թվում է, թե մահը կույր է,
հարվածում է ամենքին, ով նրա ձեռքի տակն է ընկ-
նում, վո՛չ վոքի չի խնայում, վո՛չ հարուստին, վո՛չ աղ-
քատին, հավասարապես հնձում է բոլորին:

Սակայն բանից յերևում է, վոր վո՛չ միայն հիվան-
դությունները, այլ և մահն անգամ մեր բանվոր յեղբորն
ավելի յե «սիրում»:

1911 թվին Գերմանիայի Բրեմեն քաղաքի զիտնա-
կանները հետաքրքրվեցին այն հարցով, թե աղքատնե-
րից են արդյոք շատ մեռնում, թե՞ հարուստներից:

Յեվ հաշվեցին: Պարզվեց, վոր 1000 հարուստից այդ
տարվա ընթացքում մեռել են 7 հոգի, միջին ունևո-
րության տեր մարդկանցից — 10 հոգի, իսկ չքավորներից՝
20 հոգի:

Դուրս ե գալիս, վոր աղքատներից մեռնում են 3
անգամ ավելի, քան հարուստներից:

Նմանորինակ վիճակագրություն կատարվել է նաև
Անգլիայում: 1900 թվից մինչև 1902 թիվը պարզվել է
նույն դրությունը, այն է՝ սովորական բանվորներից
մահացածների թիվը 3 անգամ ավելի յե, քան մեռած
աստիճանավորների և առևտրականների— ու չորս ան-
գամ ավելի, քան հոգևորականների թիվը:

Դա, իհարկե, առաջ է գալիս վո՛չ թե նրանից, վոր
յերկնային բնակիչները սիրում են աղքատ բանվորին
ավելի, քան հարուստներին, և այդ պատճառով ել մեզ ի-
րենց մոտ են հավաքում: Դրա պատճառն այն է, վոր վիշ-
տը, հոգսը, զրկանքն ու կիսաբաղց կյանքը, ինչպես և հո-
գեմաշ աշխատանքը—այդ բոլորը քայքայում է բանվորի
առողջությունը և նրան վաղաժամ գերեզման տանում:

«Բանվորը մեռավ»: Այդ յերկու սեղմ բառե-
րի տակ ցավի և արցունքի հսկայական ովկյան կա:
Աշխատավորը մեռավ— այդ նշանակում է, վոր մեռավ
վո՛չ միայն սիրելի հայրը և ամուսինը, այլ մեռավ մի
մարդ, վորի ամբողջ ընտանիքը ապրում էր նրա աշխա-
տանքով. այդ նշանակում է՝ մեռավ ընտանիքի գլխա-
վոր և միակ կերակրողը, նրա կյանքի միակ հենարանը:
Անակնկալ դժբախտությունից զլուխը կորցրած հանգու-
ցյալի կինը վազում է գործարանատիրոջ մոտ, վորի հա-
մար իր ամուսինն աշխատել էր, վազում է իր ամուսնու
ընկերների մոտ, խնդրում, ոգնություն հայցում իր և
իր զավակների համար: Բայց գործարանատիրոջ համար
հոգ չե, թե ինչպես են նա և նրա յերեխաները. իսկ
ընկեր բանվորները նույնպիսի աղքատ մարդիկ են, վո-
րոնք իրենց որավարձով են ապրում՝ ինչ աշխատում
են, այն ել ուտում են: Ինչու՞վ կարող են հանգուցյալի

կնոջն ոգնել: Լավագուշն դեպքում, իրենց մեջ միքա-
նի կոպեկ կհանգանակեն և կտան խեղճ այրիին:

Յեվ ցուրտը, և քաղցը և դառն ու անհույս կարիքը
թագավորում են նրա տանը, ուր քիչ առաջ քիչ թե
շատ բարեկեցիկ վիճակ եր տիրում:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԲԱՆՎՈՐՆԵՐԸ ԿՌՎԵԼ ԿԱՐԻՔԻ ԴԵՍ

Ահա այսպես ե ապրում բանվորն աշխարհում: Որ
ավուր նա հարկադրված ե կովել, պայքարել, վորպեսզի
կարողանա իր գոյությունը պահպանել: Այս դրության
մեջ յերկար են ապրել բանվորները, կովելով քաղցի,
կարիքի և զրկանքների դեմ, ամենքը ջուկ-ջուկ, չհաւ-
կանալով, վոր այդ ձևով գործին ոգտակար լինել չեն
կարող:

Բայց ահա նրանց մեջ յերևան են գալիս ավելի
գի ոակիցները, վորոնք կոչ են անում բոլոր բանվորներին
միանալ, վորպեսզի միահամուռ ուժերով կարողանան ի-
րենց դրությունը բարելավել:

Նրանք փորձել են իրենց միությունների և փոխա-
դարձ ոգնության ընկերություններին միջոցով ապահովել
իրենց վիճակը, սկսել են «անլահովագրել» բանվորներին
նրանց հիվանդության, մահվան և գործազրկության դեպ-
քերում:

Միություններն իրենց անդամներից մուծանք եյին
գանձում և իրենց գանձարկղներից նպաստ տալիս բան-
վորին՝ նրա գործազրկության համար: Բայց շուտով բան-
վորները համոզվեցին, վոր այս ձևով ել դժվար ե դար-
զին դարման անել. մուծանք վճարել ընկերության գան-
ձարկղին բոլորը հնարավորություն չունեյին, շատերի
աշխատավարձն ել հաղիվ եր բավականանում ցամաք հաց
գնելու համար: Յեվ հենց այդ աղքատ բանվորներն են,
վոր ամենից ավելի ոգնության կարիք են զգում: Յեվ
յերկար խորհրդածություններից հետո բանվորները հաս-

կանում են, վոր սեփական մուծանքները շատ քիչ են
ոգնության կարոտ բանվորների համար:

Յեվ սոցիալիստները, վոր դեռ այն ժամանակ ել
կային բանվորների մեջ, սկսեցին կոչ անել և պահան-
ջել կառավարությունից, վոր բանվորները ձրիաբար
ապահովագրվեն գործազրկության և այլ դեպքերում:

«Չե՞ վոր մեր ձեռքի աշխատանքից ոգտվում ե ամ-
բողջ պետությունը, ուրեմն թող նա յել մեզ ապահովի,
յերբ մենք զրկվում ենք աշխատավարձից» — ասում եյին
այն ժամանակվա գիտակից բանվոր-սոցիալիստները: Յեվ
միքառասուն տարի սրանից առաջ արտասահմանի բան-
վորները հանգես յեկան սոցիալական ապահովագրու-
թյան պահանջով՝ ի հաշիվ գործարանատերերի, այս-
ինքն, վոր տերերը ապահովագրեն իրենց բանվորներին
հաշմության, հիվանդության, անգործության և այլ դեպ-
քերում, յերբ բանվորը զրկվում ե աշխատավարձից,
և վորպեսզի այդ ապահովագրության մուծանքը կատա-
րեն իրենք տերերը և կառավարությունը:

Բանվորների այդ կռիվը շատ յերկար տևեց և մի-
այն միքանի յերկրներում բազմաթիվ զոհերի գնով նը-
րանք կարողացան հասնել վորոշ արդյունքի: Իսկ մի
շարք ուրիշ յերկրներում դեռ մինչև որս ել այդ պայ-
քարը շարունակվում ե, այնտեղ ներկայումս ել գործա-
զրկության դեպքում բանվորը վոչնչով չի ապահովվում:
Մոտավորապես նույն բանն եր կատարվում նաև Ռու-
սաստանում: 1903 թվին միայն բանվորներին հաջողվեց
ցարական կառավարությունից կորզել մի որենք, վորի
համաձայն գործարանատերերը պատասխանատու յեն
դառնում բանվորների համար՝ դժբախտ պատահար-
ների դեպքում:

Այդ որենքի համաձայն, այն գործարանատերը,
վորոնց գործարանում բանվորը հաշմություն ե ստացել,
պարտավոր եր վճարել բանվորին նրա աշխատավարձի
կեսը մինչև նրա բժշկվելը, իսկ հետո, յեթե այդ բան-
վորը հաշմանդամ եր դառնում, պարտավոր եր վճարել

փոքրիկ կենսաթոշակ: Բանվորներին, իհարկե, այդ չհանգստացրեց, և նրանք իրենց գործադուլների ժամանակ սոցիալական ապահովագրութայն պահանջն ելին առաջադրում:

Այսպես 1904 թվին, յերբ Ռուսաստանում բանվորական գործադուլները ալիքը բարձրացավ և գրեթե հասնում եր արդեն Նիկոլայ II-ի գահին, ցարը հատուկ մանիֆեստով խոստացավ «հոգ տանել բանվորների մասին պետական ապահովագրություն սահմանելով»: Բայց ինչպես պարզվեց, թագավորն առանձնապես մտահոգված չեւր իր խոստումը ի կատար ածելով. ամբողջ ութ տարի այդ խոստումը անուշադիր եր թողնված գանազան հանձնաժողովներ ի և դեպարտամենտների գրասենյակներում, և միայն 1912 թ. հունիսի 23-ին հրատարակվեցին յերկու որենք՝ մեկը բանվորների ապահովագրութայն մասին՝ հիվանդութայն դեպքում (հիվանդանոցային գանձարկղ), իսկ մյուսը դժբախտ պատահարներից ապահովագրելու մասին (ապահովագրական ընկերություն):

ԻՆՉՊԵՍ ԵՅԻՆ ԲԱՆՎՈՐՆԵՐԸ ԱՊԱՀՈՎՎՈՒՄ ՑԱՐԱԿԱՆ ԿԱՐԳԵՐՈՒՄ

Այդ որենքներն առանձնապես չբարելավեցին բանվորների դրությունը:

Ամենից առաջ բանվորները ապահովվում ելին աշխատավարձը կորցնելու վոչ բոլոր դեպքերում, այլ միայն հիվանդութայն, ծննդաբերութայն և հաշմութայն ժամանակ: Իսկ անգործութայն և հաշմանդամութայն դեպքերում, վորոնք առաջ են պալիս վոչ միայն հաշմությունից, այլ նաև ծերությունից, այրիանալուց ու վորբանալուց, ապա այդ դեպքերում բանվորները և նրանց ընտանիքը բոլորովին չեյին ապահովվում:

Այդ որենքի համաձայն ապահովվում ելին վոչ բոլոր բանվորները, այլ միայն նրանք, ռովքեր աշխատել

են խոշոր գործարաններում կամ արհեստանոցներում», այսինքն՝ ապահովագրված եր Ռուսաստանի բանվորների ընդհանուր թվի միայն 20%օ-ը:

Հիվանդութայն դեպքում բանվորն իր աշխատավարձը լիովին չեւր ստանում, այլ միայն նրա $\frac{2}{3}$ -ը, այն ել 26 շաբաթ միայն. իսկ յեթե հիվանդությունը յերկարում եր ավելի, այդ դեպքում նրան այլևս նպաստ չեւր տրվում:

Բանվորները ձգտում ելին ապահովագրական մուծանքները դնել գործարանատերերի և պետութայն վրա, իսկ որենքը հարկադրեց իրենց՝ բանվորներին ավելի շատ մուծել, քան տերերը:


Բանվորները պահանջում ելին, վոր հիվանդանոցային գանձարկղները կառավարվեյին ինքնուրույն, բանվորների կողմից ընտրված մարդկանց ձեռքով, իսկ որենքը գանձարկղի վարչութայն և ընդհանուր ժողովներ ի մեջ խցկում եր գործարանատիրոջ արբանյակներին և գործակալներին, վորոնք ցարական չինովնիկներ ի հետ միասին հնարավորություն չեյին տալիս բանվորներին իրենց ապահովագրութայն գործը առաջ տանելու:

Բանվորին դժբախտ պատահարներից ապահովագրող ապահովագրական ընկերությունները որենքի ուժով ամբողջովին անցել ելին տերերի ձեռքը:

Գործարանատերերը թե նախկին և թե 1912 թ. հունիսի 23-ի որենքների համաձայն պարտավոր ելին բժշկել բանվորներին իրենց հաշվին, ձրիաբար: Տերեր ի մեծ մասը նման դեպքերում վոչ մի ոգնություն չեւր հասցնում բանվորին. իսկ այնտեղ, ուր ամբուլատորիաներ կամ հիվանդանոցներ ելին բացված, ավելի շուտ դատարկ ձեականություն ելին կատարում, քան իրապես բժշկում:

Այդ իսկ պատճառով բանվորներն աշխատում ելին, վոր բժշկական ոգնութայն գործը հանձնվի հիվանդանոցային գանձարկղին. կառավարությունը, սակայն, այդ

550108



գործը, առաջվա պես, թողեց նույն տերերի ձեռքին, վորոնք բանվորների բժշկության մասին յեղած հին որենքներն անգամ չեյին գործադրում:

1912 թ. ցարական որենքներում ուրիշ ել շատ թեքություններ կային: Սակայն բանվորները լուրջ հետաքրքրվեցին այդ որենքներով ու հիվանդանոցային գանձարկղներ հիմնելով, սկսեցին կռվել այդ գործի բարելավման և որենքների ընդլայնման համար, միաժամանակ ոգտագործելով այդ որենքները վորպես պայքարի միջոց ինքնակալության դեմ:

Ինքը կյանքը թելադրում եր նրանց այն, վոր նրանք իրենց դրությունը բարելավել կարող են միայն այն ժամանակ, յերբ կտապալվեն ցարական ինքնակալ կարգերը և իշխանությունը կխվի Նիկոլայի և ազնվականների ձեռքից:

ԻՆՁՊԵՍ ԵՆ ԱՊԱՀՈՎՎՈՒՄ ԲԱՆՎՈՐՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՔ

Չարժե յերկար կանգ առնել ժամանակավոր կառավարության հրատարակած այն որենքների վրա, վորոնք բանվորների ապահովությանն են վերաբերում: Այդ որենքները թեև մասամբ բարելավեցին հիվանդանոցային գանձարկղների դրությունը, սակայն բանվոր դասակարգի բոլոր պահանջները չբավարարեցին: Թեև տերերի կողմից վճարվող մուծանքները ավելացվեցին, բայց և այնպես բանվորները առաջվա պես ստիպված եյին մուծանքները վճարել գանձարկղին: Չնայած վոր նպաստների չափը հասցրին ամենաբարձրին, այն ե՛ 3 ռ. 33 կ. մինչև 6 ռ. 66 կ., բայց այդ ժամանակ կյանքը թանգացել եր առաջվանից 8 անգամ ավելի: Թեև հուլիսի 25-ի որենքով գանձարկղները իրավունք ստացան բժշկական գործն իրենց ձեռքը վերցնել, բայց գործարանատերերի համար մուծանքների այնպիսի աննշան չափեր եյին սահմանված, վոր շատ քիչ գան-

ձարկղներ նպատակահարմար գտան այդ գործն իրենց ձեռքը վերցնելու, և այդպիսով բժշկական ոգնությունն առաջվա պես մնում եր տերերի ձեռքին:

Մենք կանգ չենք առնի այն որենքների վրա, վորոնք հրատարակված են խորհրդ. իշխանության կողմից, սկսած 1917 թ. դեկտեմբերի 11-ից մինչև 1921 թ. նոյեմբերի 15-ը: Այդ որենքներն այժմ չեն գործում և փոխարինված են նորերով:

Նախքան այդ նոր որենքները քննելը, միքանի խոսք ասենք այն մասին, թե ինչու նրանք հրատարակվեցին. սկսած 1918 թ. մինչև 1921 թ., յերբ բոլոր գործարանները գտնվում եյին պետության ձեռքին, Ռուսաստանում, իրապես, սոցիալական ապահովագրություն գոյություն չունեիր: Վոչ վոք բանվորներին չեր ապահովագրում, վոչ վոք նրանց համար վոչ մի տեղ ապահովագրական մուծանքներ չեր վճարում, այլ կար միայն պեսական ապահովություն, այսինքն պետությունն ապահովում եր բոլոր չքավոր աշխատավորներին, նրանց թվում և բանվորներին: Իսկ վորովհետև չքավորների թիվը Ռուսաստանում շատ մեծ եր, իսկ պատերազմի և ցարական արքայականների տխուր գործերի պատճառով հանրապետության միջոցները շատ սուղ եյին, ուստի և բանվորներին ապահովություն եր տրվում շատ աննշան չափերով: Բայց ահա 1921 թվից Հանրապետությունն սկսեց իր տնտեսությունը վարել նոր ձևով: Միքանի գործարաններ անցան տնտեսավարական սկզբունքին, այսինքն, այդ գործարաններն իրենք իրենց պետք ե պահեյին և արդարացնեյին իրենց ծախքերը և միաժամանակ վաստակ ունենային: Մի շարք գործարաններ ել կապալով տրվեցին մասնավոր անձանց և կոոպերատիվներին:

Բանվորների աշխատավարձն սկսեց ավելանալ և մոտենալ «կենսական մինիմումին», այսինքն, արհեստակցական միություններն սկսեցին մշակել աշխատավարձի այնպիսի չափեր, վորոնք կարող եյին ապահովել բան-

վորները անհրաժեշտ կարիքները: Իհարկե, և այդտեղ խորհրդային իշխանութիւնը չմոռացավ փոփոխել բան- վորները ապահովութեան որեւէնքն այնպես, վոր աշխա- տավարձից զրկված բանվորներն ապահովվեն այնչափ և այնքան ժամանակ, վոր մինչև նոր գործ ճարելն իրենց գոյութիւնը պահպանեն:

Ահա և 1921 թ. նոյեմբերի 15-ին ժողովուրդը հրա- տարակեց իր վորոշումը սոցիալական ապահովագրութեան մասին: Այդ որեւէքով բոլոր գործարանները, հիմնար- կութիւններն ու անտեսութիւնները պարտավոր են իրենց բանվորների և ծառայողների համար ապահովա- գրական մուծանքներ վճարել, վորպեսզի դժբախտ պա- տահարների դեպքում, ինչպես հիվանդութիւնն է, հաշ- մութիւնը, ծերութիւնը, գործազրկութիւնը, մահը և այլն, բանվորները և ծառայողներն ապահովված լի- նեն: Այդ ձեռնարկութիւնները պետք է մուծանքներ վճարեն իրենց միջոցներից և վոչ մի դեպքում չհանեն այն բանվորի կամ ծառայողի աշխատավարձից:

Այդ բոլորից հետո հրատարակվեցին մի շարք այլ վորոշումներ ու հրահանգներ այն մասին, թե ձեռնար- կութիւնները վորքան պետք է վճարեն, իսկ բանվոր- ներն ինչպիսի նպաստներ կարող են ստանալ իրենց աշ- խատավարձից զրկվելու այս կամ այն դեպքում:

Որեւէքներում այդ դեպքերը յերեք գլխավոր մասի յեն բաժանված.

I. Ժամանակավոր անաշխատունակութիւն (հիվան- դութիւն, հղիութիւն և ծննդաբերութիւն, վարակիչ հիվանդութիւն ունեցող ընտանիքի անդամին խնամե- լու դեպքերը):

II. Գործազրկութիւն:

III. Մշական անաշխատունակութիւն (հաշման- դամութիւն, այրիութիւն և վորբուրութիւն):

Ահա և մենք կարգով կքննենք այդ դեպքերը և կա- սենք, թե ինչպես և վորտեղից բանվորը կարող է ստա-

նալ այդ նպաստները, յեթե թված դեպքերից մեկն ու մեկը պատահի նրա հետ, և իսկապես, վորպիսի ապահո- վութիւն կարող է նա ստանալ:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

ա. Հիվանդութիւն, ՀԱՇՄՈՒԹՅՈՒՆ, ԿԱՐԱՆՏԻՆ ՅԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԻՎԱՆԴ ԱՆԴԱՄԻՆ ԽՆԱՄԵԼՈՒ ԴԵՊՔԵՐ

I. Ովքե իրավունք ունեն նպաստ ստանալու.—

Հիվանդութեան դեպքում նպաստ ստանալու իրա- վունք ունի յուրաքանչյուր բանվոր և ծառայող, յեթե բժիշկը հաստատի, վոր նա ժամանակավորապես աշխա- տանքի անընդունակ է հիվանդութեան կամ հաշմութեան պատճառով: Այդ նպաստն իրավունք ունի ստանալու նաև յուրաքանչյուր բանվոր և ծառայող այն դեպքում,

1) Յեթե նրան կարանտին (առանձնացման տուն) են տեղավորել նրա ընտանիքում վարակիչ հիվանդութիւն պատահելու հետևանքով և

2) Յեթե ընտանիքի անդամներից մեկն ու մեկը լուրջ հիվանդանա և մինչև բժշկի գալը, կամ հիվանդին հիվանդանոց տեղավորելը, բանվորը ստիպված կլինի ըզ- բաղվել իր հիվանդին խնամելով:

II. Նպաստների չափերը.—

Այդ նպաստը տրվում է հիվանդ բանվորի կամ ծա- ռայողի լրիվ աշխատավարձի չափով:

III. Վորքան ժամանակ է տրվում նպաստը.—

Ժամանակավոր անաշխատունակութեան դեպքում նպաստը տրվում է.

ա. Հիվանդներին և հաշմանդամներին—հիվանդութեան առաջին օրից մինչև հիվանդի առողջանալը, կամ մինչ այն, վոր բժիշկը կհաստատի, թե հիվանդն այլևս չի բուժ- վի, և վոր նա հաշմանդամ է դարձել: Վերջին դեպքում նրա համար կենսաթոշակ և նշանակվում:

բ. Կարանտինում գտնվողներին՝ առանձնացման տանը գտնվելու ամբողջ ժամանակամիջոցում:

գ. Հիվանդներին խնամողներին՝ մինչև հիվանդին հի- վանդանոց տեղավորելը:

Բ. ՆՊԱՍՏՆԵՐ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ ԱՐՁԱՆԿՈՒՐԴ ՍՏԱՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

I. Ովքեր իրավունք ունեն հիվանդության պատճառով արձակուրդ ստանալու.—

Հիվանդութեան պատճառով արձակուրդ ստանալու իրավունք ունի ամեն մի բանվոր և ծառայող, վորին բժշկական վերահսկիչ հանձնաժողովը վկայական կտա այն մասին, թե նա բժշկվելու կարիք ունի իր գործատեղից կամ պաշտոնավայրից դուրս, վորևէ գյուղում կամ ամառանոցում:

II. Նպասների չափերը.—

Արձակուրդի դեպքում նպաստ է տրվում արձակուրդ ստացած հիվանդի լրիվ աշխատավարձի չափով:

III. Վորքան ժամանակ է սրվում նպաստը.—

Նպաստը տրվում է արձակուրդի ամբողջ ժամանակամիջոցում:

IV. Ինչպես արձակուրդ ստանալ հիվանդության պատճառով.—

Հիվանդութեան պատճառով արձակուրդ ստանալ ցանկացողները պետք է գնան ապահովագրական գանձարկղ և այնտեղ իմանան, թե ինչ փաստաթղթեր են հարկավոր նպաստ ստանալու համար:

Գ. ՀՂԻՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

I. Ովքեր իրավունք ունեն նպաստ ստանալու.—

Հղիութեան և ծննդաբերութեան համար նպաստ ստանալու իրավունք ունեն բոլոր բանվորուհիներն ու կին ծառայողները սկսած հղիութեան 8-րդ ամսից:

II. Նպաստի չափը.—

Հղիութեան և ծննդաբերութեան դեպքում նպաստ է տրվում հղի կնոջ լրիվ աշխատավարձի չափով:

III. Վորքան ժամանակ է սրվում նպաստը.—

Այն բանվորուհիները կամ կին ծառայողները, վորոնք զբաղված են ծանր ֆիզիկական աշխատանքով, այդ նպաստն ստանում են 8 շաբաթ ծննդաբերությունից առաջ և 8 շաբաթ էլ հետո, մնացածները՝ 6 շաբաթ ծննդաբերությունից առաջ և 6 շաբաթ հետո:

Դ. ԼՐԱՅՈՒՅԻՉ ՆՊԱՍՏՆԵՐ ԾՆՆԴԱԲԵՐՈՒՆ

I. Ովքեր իրավունք ունեն նպաստ ստանալու.—

Լրացուցիչ նպաստ տրվում է բոլոր բանվորուհի և ծառայող ծննդկաններին, ինչպես նաև բոլոր բանվորների և ծառայողների կանանց, յեթե վերջիններս ծննդկաններ են:

II. Նպաստի չափը.—

Այդ նպաստը տրվում է՝

1. Յերեխայի խնամքի առարկաներ գնելու համար—բյուջետային միջերացանկի 70% -ի չափով:

2. Յերեխային կերակրելու համար—բյուջետային միջերացանկի 18% -ի չափով:

III. Վորքան ժամանակ է սրվում նպաստը.—

Խնամքի համար նպաստ է տրվում մեկ անգամ ծննդաբերությունից հետո, իսկ կերակրելու համար նրան նպաստ է տրվում 9 ամիս:

Ե. ԹԱՂՄԱՆ ՆՊԱՍՏ

I. Ովքեր իրավունք ունեն նպաստ ստանալու.—

Թաղման համար նպաստ է տրվում բոլոր բանվորներին ու ծառայողներին նրանց ընտանիքի այն անդամների մասվան դեպքում, վորոնք գտնվել են բանվորի խնամքին, իսկ իր, բանվորի կամ ծառայողի մասվան դեպքում նպաստ է ստանում նա, ով կատարել է թաղումը:

II. Վորժան նպաստ ե տրվում թաղման համար.—

Թաղման համարնպաստ ե տրվում քաղաքացիական թաղման փաստացի արժեքի չափով:

ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆ

I. Ովքեր իրավունք ունեն նպաստ ստանալու.—

Նպաստ ստանալու իրավունք ունեն.

1) Չեռնարկուծթյուններից հեռացված բոլոր սոսկական բանվորները և ծառայողները, վորոնք առնվազն յերեք տարի վարձու աշխատանքով են զբաղվել գործարաններում և հիմարկուծթյուններում:

2) Բոլոր վորակյալ (իրենց գործը լավ գիտցող) բանվորները:

3) Նրանք, ովքեր 16 տարեկան հասակից վարձու աշխատանքով են զբաղվել:

4) Բոլոր միայնակ կանայք, վորոնք ունեն 8 տար. փոքր հասակ ունեցող յերեխաներ:

Այդ բոլոր անձինք պետք ե ցուցակագրվեն աշխատանքի բորսայում գործից հեռացվելուց անմիջապես հետո, վորովհետև ուշանալու դեպքում կգրկվեն նպաստ ստանալու իրավունքից:

Վերոհիշյալ անձերից բացի նպաստ ստանալու իրավունք ունեն զորաբանակի շարքերից արձակված այն կարմիր բանակայիները, վորոնք զորաժողովից առաջ զբաղվել են վարձու աշխատանքով և աշխատանքի բորսայում ցուցակագրվել են վոչ ուշ, քան զորացրումից յերեք շաբաթ հետո:

Գործազրկության նպաստները տարբեր անձանց տարբեր չափով են տրվում: Վորակյալ բանվորները և առհասարակ յերկարամյա վարձու աշխատանքով զբաղվածներն ստանում են բյուջետային մթերացանկի 50% -ի չափով: Մնացածներն ստանում են նույն բյուջետային մթերացանկի 35% -ի չափով:

II. Վորժան ժամանակ ե տրվում նպաստ.—

Նպաստը տրվում ե վոչ ավել, քան 26 շաբաթ շարունակաբար և վոչ ավել, քան 30 շաբաթ մի տարվա ընթացքում:

III. Վորսեղ կարելի յե նպաստ ստանալ.—

Այդ մասին պետք ե հարցնել Աշխատանքի բորսայում ցուցակագրվելիս, վորտեղ և մանրամասն կասեն, թե ուր պետք ե դիմել և ինչ վկայականներ պետք ե ներկայացնել նպաստ ստանալու համար:

ՄՇՏԱԿԱՆ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա. ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ

I. Ովքեր իրավունք ունեն ապահովություն ստանալու.—

Հաշմանդամ ե համարվում այն մարդը, վորն ընդմիշտ կորցրել ե իր աշխատունակությունը, այսինքն այլևս ընդունակ չե սեփական աշխատանքով ապրուստ ձարելու իր համար:

Հաշմանդամությունը կարող ե առաջ գալ զանազան պատճառներից՝ հաշմությունից, աշխատանքի ժամանակ հիվանդանալուց (պրոֆեսսիոնալ հիվանդություն), ընդհանուր հիվանդություններից, ծերությունից և այլն:

Ապահովություն ստանալու իրավունք ունեն բոլոր այն բանվորներն ու ծառայողները, վորոնց հաշմանդամությունը առաջ ե յեկել հաշմությունից և պրոֆեսսիոնալ հիվանդություններից: Իսկ յեթե հաշմանդամության պատճառներն այլ են (հիվանդություններ, ծերություն և այլն), ապա այդ դեպքում ապահովություն են ստանում միայն նրանք, ովքեր վարձու աշխատանքով զբաղվել են առնվազն ութ տարի կամ այդպիսի աշխատանքով զբաղվել են 16 տարեկան հասակից:

II. Ապահովության չափեր.—

Հաշմանդամները բաժանվում են միջանի խմբերի: Կան այնպիսիները, վորոնք վոչ միայն չեն կարող աշխատել, այլև կարիք ունեն կողմնակի ոգնության

(յերկու աչքով կույրեր, խելագարներ, անձեռ կամ անվոտ մարդիկ և այլն): Այդ անողնական մարդիկ կոչվում են «առաջին կարգի հաշմանդամներ»: Այդպիսի հաշմանդամներն իրավունք ունեն կենսաթոշակ ստանալու բյուջետային մթերացանկի 70%-ի չափով:

Կան այնպիսիները, վորոնք բոլորովին անընդունակ են աշխատանքի, սակայն կողմնակի ոգնության կարիք չեն դգում. այդպիսիները կոչվում են «յերկրորդ կարգի հաշմանդամներ»: Այդպիսիներին կենսաթոշակ ե տրվում բյուջետային մթերացանկի 50%-ի չափով:

Կան և այնպիսի հաշմանդամներ, վորոնք չեն կարող գբաղվել իրենց մշտական գործով և առհասարակ անընդունակ են մշտական աշխատանքի, բայց կարող են կատարել ժամանակավոր և թեթև աշխատանք. այդպիսիներին տրվում ե բյուջետային մթերացանկի 35%-ի չափով: Վերջապես կան և այնպիսի հաշմանդամներ, վորոնք կաղ են կամ զրկված են միքանի մատից, բայց վորոնք կարող են աշխատել: Այդպիսիներին կենսաթոշակ չի տրվում: Այդպիսի հաշմանդամները ցուցակագրվում են աշխատանքի բորսայում և ապահովագրական գանձարկղից նպաստ են ստանում վորպես գործազուրկներ:

Յեթե հաշմանդամը տեղավորված ե հաշմատանը կամ հանրակացարանում, այդ դեպքում նրան վոչ մի կենսաթոշակ չի տրվում, վորովհետև նա այդտեղ ստանում ե և՛ բնակարան, և՛ սնունդ, և՛ հագուստ:

III. Վորխան ժամանակ ե կենսաթոշակ տրվում.—

Առաջին, յերկրորդ և յերրորդ կարգի հաշմանդամներին կենսաթոշակ ե տրվում մինչև մահ, յեթե հաշմանդամը մինչ այդ չի առողջանում և աշխատունակ դառնում:

ԱՅՐԻՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՎՈՐԲՈՒԹՅՈՒՆ

I. Ովքեր կարող են ապահովություն ստանալ.—

Բանվորի կամ ծառայողի մահվան կամ անհայտ բացակայելու դեպքում ապահովություն կարող են ստանալ նրանց ընտանիքի հետևյալ անդամները:

Յեղբայրները, զավակները և քույրերը մինչև 16 տարեկան, անաշխատունակ կամ ութ տարեկան յերեխա ունեցող կիներ, և հայրը, և մայրը, յեթե նրանք հանգուցյալի խնամքին եյին գտնվում և յեթե նրանք ուրիշ աշխատունակ զավակներ չունեն:

II. Կենսաթոշակի չափը.—

Մեռածի ընտանիքին կենսաթոշակ ե տրվում հետևյալ չափով՝

ա) Յեթե ընտանիքում կա մեկ անաշխատունակ մարդ—այդ դեպքում տրվում ե բյուջետային մթերացանկի 18%-ի չափով:

բ) յեթե հանգուցյալը թողել ե յերկու անաշխատունակ անդամ—տրվում ե բյուջետային մթերացանկի 35%-ի չափով:

գ) յեթե ընտանիքն ունի յերեք և ավելի անաշխատունակ անդամ—կենսաթոշակ ե տրվում բանվորի բյուջետային մթերացանկի 50%-ի չափով:

Յեթե ընտանիքի անդամներից մեկն ու մեկը տեղավորվում ե հանրակացարանում կամ մանկատանը, այդ դեպքում այդ անդամի համար կենսաթոշակ չի տրվում:

III. Վորխան ժամանակ ե կենսաթոշակ տրվում.—

Այդ կենսաթոշակները տրվում են՝

Զավակներին, յեղբայրներին և քույրերին մինչև այն, վոր լրանա նրանց 16 տարին, յերեխա ունեցող աշխատունակ կնոջը մինչև յերեխայի 8 տարեկան դառնալը և անաշխատունակ անդամներին կենսաթոշակ ե տրվում ցմահ, յեթե մինչև այդ նրանք աշխատունակ չեն դառնա:

**ՎՈՐՏԵՂ ԿԱՐՈՂ ԵՆ ԿԵՆՍԱԹՈՇՈՇԱԿ ՍՏԱՆԱԼ
ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԸ, ԱՅՐԻՆԵՐՆ ՈՒ ՎՈՐԲԵՐԸ**

Կենսաթոշակ ստանալ ցանկացողները պիտի հայտա-
րարություն տան իրենց բնակավայրի կամ մոտավոր
կենտրոնի ապահովագրական գանձարկղին: Այնտեղ
մանրամասն ցույց կտան, թե ինչպիսի վկայական-
ներ պիտի ներկայացնել կենսաթոշակ ստանալու համար:

**ԵՂ ԻՆՁ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒՆԵՆ ԲԱՆՎՈՐՆԵՐՆ ՈՒ ԾԱ-
ՌԱՅՈՂՆԵՐԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ
ԴԵՊՔՈՒՄ**

I. Հիվանդներին, հղիներին յեվ ծննդկաններին չի կա-
րելի գործից հեռացնել

Ձեռնարկություններն իրավունք չունեն գործից
հեռացնելու հիվանդին, յեթե հիվանդությունը տևի
մինչև չորս ամիս: Այդ ժամանակամիջոցում հիվանդը
իրավունք ունի ստանալու առողջ բանվորին տրվող
լրիվ աշխատավարձը: (Ձեռնարկությունից կամ կոպե-
րատիվից տրվող փայեր և այլն):

II. Ծննդկաններին մինչեվ առողջանալն աշխատանքի
թողնելն արգելվում է

Վորովհետև ծննդկանների համար վնասակար է
ծննդաբերությունից անմիջապես հետո աշխատելը, ուս-
տի և որենքը խիստ արգելում է նրանց աշխատել, քա-
նի դեռ նա նպաստ է ստանում (8 կամ 6 շաբաթ)
ծննդաբերությունից հետո:

Ծննդկանին աշխատանքի թողնելու համար տերը
կամ հիմնարկության վարչությունը տուգանվում են
ու բանտարկվում մինչև մեկ տարի ժամանակով:

III. Ծննդկանն իրավունք ունի յերբեմն ընդհատել աշխա-
տանքը յերեխային կերակրելու համար

3 ժամը մեկ անգամ բանվորուհի-ծննդկանը կամ

կին-պաշտոնյան իրավունք ունի կես ժամով հեռանալ
յերեխային կերակրելու համար:

IV. Հղիներին յեվ մայրերին չի կարելի սեղափոխել կամ
գործուղել ուրիշ ֆադաֆներ

Վոչ վոք իրավունք չունի ուրիշ քաղաք ծառայու-
թյան փոխադրելու կամ այնտեղ գործուղելու առանց
նրանց համաձայնության—հղիներին, սկսած 5-րդ ամ-
սից, և մինչև 8 տարեկան յերեխա ունեցող մայրերին:

V. Հղիներին յեվ ծծկեր յերեխաներ ունեցողներին չի
կարելի գիւտային աշխատանքների ուղարկել

Հղի և ծծկեր յերեխա ունեցող կին-բանվորուհուն
վոչ վոք իրավունք չունի ստիպելու գէշերային հերթա-
պահություն կատարել:

VI. Հղի բանվորուհիներին յեվ ծծկեր յերեխա ունեցող
մայրերին արտաօրնայ աշխատանքներ սալն արգելվում է

Վոչ վոք իրավունք չունի ստիպելու արտաօրնայ
աշխատանք կատարել ծանր ֆիզիկական աշխատանքով
զբաղված հղի բանվորուհիներին, սկսած հղիության
5-րդ ամսից, ինչպես նաև ծծկեր յերեխաներ ունեցող
մայրերին:



ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺՈՂՈՎՐԳԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳԻՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒ-
ԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Բ. Գ. ԴԱՆՍԿԻՅ — Խորհրդային սոցիալական ապահովագրությունը
2. Ա. ՎԻՆՈԿՈՒՐՈՎ — Բանվորական ապահովագրական շարժումը
3. Բ. Գ. ԴԱՆՍԿԻՅ — Ո՞ւմ ընտրել ապահովագրական գանձարկղի կոմիտեյի անդամ
4. Զ. ՏԵՏՆԵՖՈՒՆ — Բանվորների ապահովագրությունը վորպես դասակարգային պայքարի արդյունք
5. Ն. Ի. ԲԸԽՈՎՍԿԻՅ — Ի՞նչ է տալիս բանվորին սոցիալական ապահովագրությունը

ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Բ. ԼՅՈՒԲԻՄՈՎ — Սոցիալական ապահովագրությունը անցյալում և այժմ
2. «Ապահովագրվածի տեղեկատու»

Լույս տեսած հրատարակությունները վաճառվում են Սոցիալական Ապահովագրության վարչության գրասենյակում:

«Ազգային գրադարան»



NL0218931

44.052

ԳԻՆՆ Ե 20 ԿՈՊԵԿ